ՌԵԳԻՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ԻՄ ՀՈՒՇԵՐԻՑ

«Ինքս իմ աչքում նմանվում եմ մի երեխայի,

որը բռով որսալ է ուզում՝ գարնանային

կենարար անձրևը, բայց որի մեծ մասը

հոսում է մատների արանքով՝

թողնելով փայլուն կաթիլներ»:

Յ. Պ. ԷՔԵՐՄԱՆ

Չարենցի հետ ծանոթացել եմ 1930 թվականի ամռանը, երբ 15 տարեկան էի և, ավարտած լինելով յոթնամյա դպրոցը՝ լիովին նվիրել էի հեծանվային սպորտին. պատրաստվում էի մասնակցել առաջիկա մրցություններին: Միաժամանակ գրում էի ոտանավորներ, երբեմն ցույց տալիս արդեն ճանաչված գրողների՝ այդպիսով ձեռք բերելով նրանց ծանոթությունը:

Ամռան մի գեղեցիկ օր, հեծանվային մարզումներից հոգնած՝ մտա «Ինտուրիստ» (այժմ՝ «Երևան») հյուրանոցի զով սրահը՝ փոքր-ինչ հանգստանալու: Հանդիպեցի ծանոթ գրողների, այդ թվում բանաստեղծ Գուրգեն Մահարուն:

Չանցած մի քանի րոպե նկատեցի հյուրանոցի երկրորդ հարկից իջնող ձեռնափայտը ձեռքին մի փոքրամարմին մարդու: Իմ բոլոր զրուցակիցները՝ մեկեն շրջապատեցին ինձ անծանոթ, բայց անհասկանալի ուժով իմ ուշադրությունը իր վրա գամած մարդուն և աշխույժ զրույցի բռնվեցին հետը:

Մեկ առ մեկ բոլորին շտապ հայացքով աչքի անցկացնելուց հետո՝ հարցրեց, թե ով է հապա այս սպորտսմեն փոքրիկը՝ զննելով ինձ ոտքից գլուխ: Չգիտեմ ինչո՞վ արժանացա նրա համակրանքին. արդյոք հեծանվավազքի համար հատուկ պատվիրած գոլֆ համազգեստս կամ սպորտային կեցվա՞ծքս դուր եկավ նրան. նա հանդիսավոր վեր բարձրացրեց ձեռքը և առանձնահատուկ շեշտով գոչեց. «Էֆֆերի՜մ»:

Այդ ժամանակ Գուրգեն Մահարին բռնելով ձեռքս առաջ տարավ եւ ներկայացրեց ինձ՝ նուրբ խոսքերով շոյելով ինքնասիրությունս: Միայն Չարենց բառը լսելուց հետո ես զգացի, թե ինչ մեծ բախտ է վիճակվել անձնապես ծանոթ լինելու այն մարդուն, որի մասին արդեն շատ անգամ էի լսել թե՛ դպրոցում և թե՛ հարազատներիս միջավայրում:

Բախտի բերմամբ գրավեցի Չարենցի ուշադրությունը, և նա մեծ հետաքրքրությամբ սկսեց հարցուփորձ անել զբաղմունքիս բնույթի, ծնողներիս, մտադրություններիս, նույնիսկ հեծանիվիս մասին:

Նրան անչափ հետաքրքրեց, որ ծնողներս եղել են հայ գիտական մտավորականության այն ներկայացուցիչներից, որոնք արտասահմանում բարձրագույն կրթություն ստանալուց հետո վերադարձել են հայրենիք և իրենց գիտելիքներն ի սպաս դրել հայ ժողովրդին:

Այդ օրվա խոսակցության ողջ ընթացքում նա այնքան էլ հավանելով Ռեգինա՝ իմ ոչ այնքան խրոխտ անունը, իր մեծ ու խորունկ աչքերով ինձ մի շտապ շեղ հայացքով նայելուց հետո՝ բոլորի մոտ հայտարարեց, որ ինքն այսուհետև ինձ Ռոլան է կոչելու, և որ ես իր փոքր ու մտերիմ բարեկամը պիտի լինեմ:

Այդպես էլ եղավ: Նրա այդ կողմնորոշումը լիովին իրականություն դարձավ և որոշ ընդմիջումով շարունակվեց մինչև վերջ:

Սրահի մեր այդ խոսակցությունից անմիջապես հետո Չարենցը մեծ աշխույժով բոլորին, այդ թվում և ինձ, հրավիրեց իր սենյակը՝ սուրճ խմելու (ապրում էր հյուրանոցի երկրորդ հարկում):

Անսահման էր իմ ուրախությունը նրա բնակարանում: Այսօրվա պես հիշում եմ. պատից կախված ճապոնական մեծաճաշակ ոսկեզօծ պաննոյի կողքին, պատվանդանների և պահարանների վրա դրված էին եգիպտական և հնդկական արձաններ ու արձանիկներ. պատերին կախված կային մի շարք նկարներ, որոնցից պարզ հիշում եմ Դանտեի կիսադեմ նկարը և իր սիրելի հանգուցյալ կնոջ՝ Արփենիկի դիմանկարը:

Հիշողությանս մեջ առանձնապես մնացել է Լենինի փոքրիկ գունավոր դիմանկարը, որ առանձին խնամքով կախված էր գրասեղանի մոտ՝ անմիջապես իր կողքին:

Նրան շրջապատող իրերը, որոնց մեծ մասը գրքեր էին՝ տեղավորված պատերի երկայնքով ու բարձրությամբ, պերճախոս վկայում էին անզուգական ու նրբագեղ ճաշակ:

Ուղղակի շլացած էի այն ամենով, ինչ առաջին անգամ էի տեսնում այդտեղ:

Հապա ի՞նքը՝ Չարենցը...

Երբեք չեմ մոռանա իմ կյանքի այդ նշանավոր օրը, երբ նա, հյուրանոցի ճաշարանի մատուցողին սուրճ և մրգեր պատվիրելուց հետո, արևելյան ճաշակով տնային մի երկար ու լայն վերնազգեստ գցեց վրան (նախօրոք հանելով վերնաշապիկը), ծալապատիկ նստեց իր սիրած փափուկ թախտին ու թզբեհը խաղացնելով ձեռքերում՝ սկսեց մեծ ոգևորությամբ զրուցել:

Աստվա՛ծ իմ, այդպիսի ձեռքեր...

Ձեռքերի ափերը նուրբ վարդագույն էին ու ձեռքի երեսից եզրագծված կարծես քանոնով: Մատները երկար էին ու ծայրերին ունեին թեթևակի բարձիկներ: Ձեռքերը նուրբ էին, բայց առնական. մի հազվադեպ գեղեցկություն. յուրաքանչյուր հոչակավոր դաշնակահար, կարծում եմ, կերազեր ունենալ Չարենցի ձեռքերը:

Հուշագրական ժամանակագրության որոշակի խախտումով ասեմ, որ Չարենցը հետագայում ինձ երբեմն հարցրել է, թե արդյոք տգե՞ղ է ինքը: Կար միայն մեկ պատասխան, որ ինքը գեղեցիկ է, և դա ասում էի խոր համոզումով:

Եվ իրոք, չնայած փոքր հասակին, Չարենցն ուներ շատ համաչափ կազմվածք և իր ներքինն ամփոփող արտահայտիչ ու ազնվաշուք կեցվածք: Հապա աչքերը... Խոսելիս լիներ, թե պարզապես նայելիս, նա կարողանում էր դիմացինին գերել, լիովին ենթարկել իրեն:

Դժբախտաբար, ես ամենևին չեմ հիշում, թե ինչի մասին էր այդ առաջին օրվա զրույցը, այն աստիճան թովված էի նրանով, այդ նյութական, շոշափելի մոտիկությունից և թարմ, առաջին անգամ ինձ ներկայացող տպավորություններից: Որոշակի հիշում եմ միայն, որ ժխորի հասնող աշխուժություն էր սենյակում, իսկ ամենից աղմկոտը՝ ինքը տանտերը:

Այդ օրվանից Չարենցը դարձավ իմ կուռքը, անկաշառ պաշտամունքը և, մոռանալով ամեն ինչ ու ամենքին՝ օր չէր անցնում, որ չայցելեի և նրա ուղեկիցը չլինեի տարբեր հրավերների եւ զբոսաշրջումների ժամանակ:

Ինչպես ասացի, ես այդ ամառ պատրաստվում էի մասնակցել հեծանվային մրցություններին և հաճախ էի մարզվում, բայց, չունենալով սեփական հեծանիվ՝ վերցնում էի ապառիկ:

Չարենցը խրախուսում էր սպորտն առհասարակ, իսկ իմ ընտրած սպորտի ձևը՝ մասնավորապես: Մի օր, երբ մարզումներից հետո եկա Չարենցի մոտ՝ հաղորդելու իմ հաջողությունները, նա մեծ հանդիսավորությամբ նստեց թախտին և ասաց, որ ես մոտենամ սենյակի անկյունում կախված վարագույրին և բարձրացնեմ վարագույրի ծայրը, տեսնելու, թե ինչ է սպասվում ինձ: Չհասկանալով հանդիսավորության պատճառը, մի քիչ էլ վախով մոտեցա եւ երբ բացեցի վարագույրը, աչքերիս չհավատացի. պատին հենված էր գերմանական (եթե չեմ սխալվում, «Դուքս» մակնիշի) մի չքնաղ վազքահեծա նիվ՝ կարմիր և դեղին ձողիկներով: Ապշահար նայեցի Չարենցի կողմը և տեսա այնպիսի մի գոհունակ ժպիտ, որից ուղղակի պապանձվեցի: Որտեղի՞ց էր կարողացել կամ ո՞ւմ էր հանձնարարել նա կարճ ժամանակամիջոցում ձեռք բերելու այդ

հրաշքը: Իրոք որ հրաշք՝ այն ժամանակվա Երևանում: Ինչ խոսք, ես անչափ երջանիկ էի անակնկալ ու շքեղ նվերի համար, որը ծառայեց ինձ այնուհետև իմ մոսկովյան ուսումնառության բոլոր տարիներին: Իսկ այստեղ, հարազատ Երևանում, մեծ հպարտությամբ վարում էի հեծանիվը հիմնականում Աբովյան փողոցում և հաճախ, երբ, ձեռքերս վարպետորեն վերցրած ղեկից՝ մոտենում էի Աբովյան և այժմյան Թումանյան փողոցների խաչմերուկին, որի անկյունում մի հին, երկհարկանի տան երկրորդ հարկում ապրում էր Արուս Ոսկանյանը և հաճախ կռթնած լուսամուտին՝ նայում փողոցի անցուդարձին, լսում էի նրա սրտաբուխ «Բրավո՛ն», որից ոգևորված նորից էի բարձրանում Աբովյանով, նորից իջնում, որ դարձյալ արժանանամ բաղձալի խրախուսանքին:

Ապա շտապում էի Չարենցի մոտ հաղորդելու, որ Արուս Ոսկանյանից ստացել եմ խրախուսական «Բրավո՛»: Չարենցը ժպտում էր և ասում, որ Արուսը բարձրաճաշակ կին է և սիրում ու գնահատում է պիկանտ բաներ:

Երանելի ու անմոռաց է ինձ համար այդ ամառը:

Նույն այդ ամռանը Չարենցը հաճախ էր լինում «Տուրիստ» կաֆեում, որը տեղավորված էր Ազիզբեկովի հրապարակի վրա գտնվող շենքի բակում: Ծաղկանոցներով շրջապատված սեղաններն իրենց զովասուն դիրքով խիստ տրամադրող էին: Չարենցի սեղանը (այդպես էլ կոչվում էր՝ «Չարենցի սեղան», և երբեք չէր զբաղեցվում) գտնվում էր բակի խորքում՝ ծածկի տակ: Եվ շատ հաճախ, երբ Չարենցը երեկոյան պահերին ձեռնափայտը ձեռքին մտնում էր բակ և ուղղվում դեպի իր սեղանը, անմիջապես, կարծես մագնիսական ուժով, հայտնվում և դեպի այդ կողմն էին շարժվում ժամանակի նշանավոր մարդիկ՝ գրողներ, նկարիչներ, դերասաններ, և երբ տեղ չէր լինում սեղանի շուրջը, կողքի սեղաններն էին միացվում. ծայր էր առնում հետաքրքիր ու աշխույժ զրույց գրականության, արվեստի ու բազում այլ՝ բոլորին հետաքրքրող հարցերից:

Այդպիսին էր Չարենցը: Նրա հետ ամեն վայրկյանն իմաստավորվում ու լցվում էր անասելի հրապույրով: Նա հեշտությամբ շրջապատի մարդկանց կարողանում էր վարակել իր կենսուրախությամբ, եռանդով ու խինդով: Բայց անսահման էր նաև նրա անսփոփ թախիծը, և նա ահավոր էր ար պահերին: Տարօրինակ էր. այդ մեծ մարդը իր անխառն լավատեսությամբ անասելի վախենում էր մահից, սոսկ այդ բառը երբեմն կերպարանափոխում էր նրան, իսկ երբ հուզվում էր, կարող էր երեխայի պես հեկեկալ, և մեծ ջանքեր էին պահանջվում հանգստացնելու համար: Սրտամոտ թեմաներ շոշափելիս (հայ ժողովրդի դառն անցյալն ու թանկագին կորուստները, սիրելի կնոջ՝ Արփենիկի մահը և այլն) նա երբեմն հոգեցունց ապրումներ էր ունենում՝ հասնելով անգամ հիստերիկ լացի, ապա հետզհետե հանգստանալով՝ նա համակվում էր խոր թախիծով:

Այդ պահերին անշարժ նստած, մտասույզ, աչքը մի կետի հառած՝ հաճախ ինձ ստիպում էր որևէ բան կարդալ կամ պատմել, միևնույն էր, թե ինչ, միայն թե կենսական որևէ ձայնով խախտվեր նրա վառ երևակայությամբ վերակենդանացած մղձավանջը: Հաճախ անկարող, բացահայտ խոստովանում էի, որ դժվարանում եմ նրան հետաքրքրող որևէ բան հիշել, բայց նա զայրանում էր, ստիպում, որ անպայման խոսեմ, պատմեմ թեկուզ որևէ անհեթեթություն: Եվ երբ ես հնազանդվելով սկսում էի որևէ բան՝ շուտով զգում էի, որ իմ պատմելու ընթացքում նա վաղուց արդեն ինձ չի լսում, կլանված է մտքերով: Ավելի հավասարակշիռ պահերին նա սիրում էր թախտի վրա ծալապատիկ նստած խորհել՝ թզբեհը ձեռքին, իսկ երբեմն էլ հենց այդ նույն տեղում ստեղծագործել, մանավանդ եթե փոքր-ինչ տկար էր զգում իրեն: Գրելու պահերին նրա մոտ միշտ դրված էին լինում անբաժան ծխամորճը և որևէ ոգելից խմիչք, հիմնականում կոնյակ, որ խմում էր փոքրիկ ումպերով՝ հաճախ կրկնելով, թե ինքը գիտե իր չափը: Ցավոք, երբեմն աննկատ անցնում էր այդ չափը, և այդօրինակ պահերին նրա լեռնացած էներգիան ելք որոնելով ընդունում էր կողմնակի աչքով անհասկանալի կամ դժվար հասկանալի ձևեր:

Մի օր նա ինձ հետը հյուր տարավ գուսան Սերոբի տունը: Ամառային շոգ օր էր, գնալու տեղը բավականին հեռու, որի պատճառով կառք պատվիրեց, հարմարավետ տեղավորվեց և ամբողջ ճանապարհին անասելի ոգևորված տարբեր սրախոսություններ էր ուղղում կառապանին, իսկ շատ հաճախ նաև կանգնեցնում կառքը՝ որևէ ծանոթի հանդիպելիս: Տեղ հասնելուն պես նույն կառապանին պատվիրեց երեկոյան գալ երկու կառքով ու զուռնաչիներով՝ իրեն ետ տանելու:

Գուսան Սերոբի տանը պատրաստված էր մեծ ու ճոխ հյուրասիրություն: Դեռ նոր էինք հասցրել կառքից իջնել, Չարենցը շտապ վազեց օջախի մոտ հետաքրքրվեց, թե ինչ ճաշ է պատրաստել տանտիկինը: Իմանալով, որ իրեն իշխան ձուկ և թփով տոլմա է սպասում, հավանություն տվեց և երեխայի պես ցատկոտելով վազեց սենյակ, բարձրացավ սեղանի մոտ դրված թախտին և ծալապատիկ նստելով սկսեց աղմկել, որ շուտ անեն, այլապես ինքը անոթի կմեռնի:

Ես չէի ասի, որ իր այդ անհամբեր պահանջներից հետո գոնե չափավոր ուտում էր. նրա գոռում-գոչյունը, անհամբերության բոլոր ցույցերը ավելի քան գերազանցում էին կերած բաժինը: Զգալի քչակեր լինելով հանդերձ՝ ախորժակով ծաղկաքաղ էր անում տարբեր խորտիկներից՝ այստեղ ևս հանդես բերելով մեծ քմահաճություն և շեշտված ճաշակ: Սեղանի շուրջը, գովեստով արտահայտվելով հայկական ճաշերի մասին՝ նա ասաց, որ ինքը, թեև շատ երկրներում է եղել, շատ է ճամփորդել, բայց հայկական ճաշերի համն ու հոտը ոչ մի տեղ չի զգացել:

Նրա անասելի առավելություններից մեկն էլ այն էր, որ ամեն միջավայրում կարողանում էր ստեղծել բոլորի համար հետաքրքիր մթնոլորտ և վարում էր նրանց հասկանալի, նրանց կողմից ընկալվող զրույց:

Չարենցի մոտ էին գալիս աշխատավոր ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչներ: Հակառակ մեծազբաղ առօրյային, նա երբեք չէր մերժում և սիրով ընդունում էր իրեն տեսնել ցանկացող, իր ընդունելությունը խնդրող բոլորին, այդ թվում և՛ սկսնակ գրողների, և՛ սիրող գուսանների, և՛ գրականագիտական ու այլ սկզբունքային հարցերի մեջ պատասխաններ որոնող հետաքրքրասերների: Որքան էր ուրախանում, երբ շարքային երիտասարդ բանվորի մեջ հայտնաբերում էր պոետական շնորհքի թեկուզ նշույլ, և տալով նրան գործնական օգտակար խորհուրդներ, հաճախ նաև նյութական օգնություն՝ նշանակում էր հանդիպման օր, խրախուսելով ճանապարհում:

Զարմանալի էր այդ մեծ մարդը, բնությունը այդ ինչ առեղծվածային սիրտ էր դրել նրա նուրբ ու նեղ կրծքավանդակում: Ինչպես ինքն էր անմնացորդ տրվում նրանց, այնպես էլ ամենամեծ սիրով համաձայնվում էր նրանցից յուրաքանչյուրի ցանկալի հյուրը լինել՝ չվիրավորելով որևէ մեկին «մեծ». մարդու մերժումով:

Այդ օրվա հյուրասիրության ժամանակ նա ավելի «տուրք տվեց» հայկական անարատ գինուն և, երբ երեկոյան պատվիրած կառքերը զուռնաչիների հետ մեկտեղ կանգնեցին դռան մոտ, գինովցած էր ըստ ամենայնի: Մինչև հյուրանոց հասնելը ամբողջ ճանապարհին խզված ձայնով գոռում-գոչում էր, որ զուռնաչիները չդադարեցնեն նվագը՝ նրա սիրած ինչ-որ մեղեդի, որը քրտնաթոր ու շնչասպառ երաժիշտները նվագում էին Շիլաչի մահլից (ուր ապրում էր գուսան Սերոբը) մինչև «Ինտուրիստ» հյուրանոցը՝ մի շնչով, անընդմեջ:

Ի վերջո հասանք: Մի կերպ բարձրանալով երկրորդ հարկ, նա սենյակ մտնելուն պես ուժասպառ մեկնվեց գորգի վրա: Քիչ հետո գտավ իրեն...

Գերլեցուն մտքի թափի կասեցում, անօրինակ ինքնատիրապետում, մարդու և մարդկայինի ներդաշնակ ամբողջության մարմնացում,—ահա՛, այն գծերը, որ շողարձակվում են ավելի քան 50 տարիների խորքից:

Սակայն միայն այդ չէ, որ մնացել է իմ հիշողության մեջ՝ ամբողջ որոշակիությամբ:

Անմոռանալի են այն րոպեները, երբ նա ազատ պահերին երբեմն զրուցում էր ինձ հետ: Զրույցների թեմաները բազմապիսի էին: Նրանից եմ ես առաջին անգամ լսել հայ դասական ճարտարապետության հիասքանչ հուշարձանների, միջնադարի մեծ մանրանկարիչ Թորոս Ռոսլինի, Պիծակի և Հովնաթանյանների տաղանդավոր սերնդի

մասին: Առաջին անգամ Չարենցից եմ լսել Մարտիրոս Սարյանի և Հակոբ Կոջոյանի անունները, որոնց արվեստը շատ բարձր էր գնահատում: Որքան էլ մատչելի թեմաներ մատուցելու լիներ, որքան էլ տարբեր դրվագներ պատմեր իր ճանապարհորդություններից, որքան էլ միտքս զբաղեցներ Ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի և այլ երկրների էկզոտիկայով, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի քաղաքակրթությամբ ու արվեստով, այնուամենայնիվ նրա զրույցների հիմնական առանցքը հայրենիքն էր, հայ ժողովուրդը, նրա տարաբախտ անցյալը և վերածնված ներկան:

Անկարող թաքցնելու հրճվանքը, նա փորձում էր բացատրել մեր դարաշրջանի էությունը, այն դարաշրջանի, որը տվել է Լենին՝ մարդկության պատմության մեջ նախորդը չունեցող այդ հսկային: Բայց հաճախ, կռահելով խոսակցի ընկալունակության մակարդակը, ընդհատելով զրույցը՝ հարցնում էր, թե արդյոք հասկացա՞ իրեն. հակառակ իմ դրական պատասխանի, շեղ հայացքով դարձյալ զննում էր ինձ և թափահարելով գլուխը ասում. «Ափսո՛ս, դեռ փոքր ես՝ շատ բաներ զգալու և հասկանալու համար»: Ցավում եմ անասելի, որ ի վիճակի չէի, ավա՜ղ, ես այն ժամանակ ո՛չ լիովին ըմբռնելու, ո՛չ գրի առնելու և նույնությամբ հավերժացնելու նրա հորդառատ բյուրեղյա մտքի գոհարները, նրա խոսքերը, որոնք մատաղ սիրտս թունդ էին հանում և լցնում հոգեպարար, անհասկանալի վեհ զգացումներով:

Որպես նմանօրինակ զրույցի հետևանք, ոգեշնչված Լենինի կերպարով, մի ոտանավոր գրեցի և տվեցի Չարենցին՝ մտածելով, թե խրախուսվելու եմ: Մեծ եղավ իմ հիասթափությունը, երբ ոտանավորը բարեխիղճ ընթերցելուց հետո ժպտաց և ասաց. «Թեպետ անտաղանդ է, բայց շատ անմիջական է ու ջերմ»:

Այդպիսին էր նա՝ շիտակ և խստապահանջ, փոքրերի հետ շփվելիս լիներ, թե մեծերի, միևնույն է:

Ներքին գոհունակությամբ պետք է նշեմ, սակայն, որ նրան մեծ հաճույք էին պատճառում իրեն նկարելու իմ երբեմնի փորձերը. նկարի մեջ տիպական շտրիխներ հայտնաբերելիս ուրախանում էր մանկան պես ու հպարտորեն ցույց տալիս մտերիմներին:

Մի օր «Ինտուրիստ» ճաշարանում սեղանի մոտ նստած սպասում էի Չարենցին, երբ նկատեցի մի երկու սեղան այն կողմ նստած մարդկանց, որոնց թվում դերասան Միքայել Մանվելյանին: Վերջինս նստած էր ինձ կիսադեմով: Իմ սեղանի կողքին, լուսամուտի մոտ, շարված էին մի շարք նոտակալներ (երեկոները այդտեղ երաժշտություն էր լինում) ձեռքիս տակ չունենալով թուղթ՝ որոշեցի նոտակալներից մեկի տախտակի վրա նկարել Մանվելյանին: Նա ուներ թեպետ առաջին հայացքից

խոժոռ, բայց շատ համակրելի ու շեշտված տիպական դեմք: Բախտի բերմամբ Մանվելյանը, երևի սպասելով մատուցողին, շատ համբերատար և անշարժ, կզակը հենած ձեռնափայտի վրա խաչաձևած ձեռքերին՝ լսում էր զրուցակիցներին: Հենց այդ էլ ինձ հնարավորություն տվեց առավել ճշգրիտ նկարել նրան: Երբ Չարենցն իջավ համարից, նստեց սեղանի մոտ, շրջեցի նոտակալը և ցույց տվեցի իմ նկարածը: Հիշում եմ՝ ինչպես հոնքերը բարձրացան, դեմքը պայծառացավ և գոչեց. «Դո՛ւ նկարիչ պետք է դառնաս». ապա նկարը ցույց տալով Մանվելյանին և նրա սեղանակիցներին՝ կանչեց Թովմասին՝ ճաշարանի հնագույն մատուցողներից մեկին, և կարգադրեց նոտակալը բարձրացնել իր համարը:

Դժվարանում եմ ասել, թե որքան էի շոյված ու երջանիկ:

Չարենցի մոտ հաճախ էին հավաքվում ժամանակի նշանավոր մարդիկ: Պարզ հիշում եմ Ավ. Իսահակյանին, Շիրվանզադեին, Բակունցին, հայ բեմի ականավոր դերասաններ Ա. Ոսկանյանին, Վ. Փափազյանին, ճարտարապետ Մ. Մազմանյանին և էլի շատ ուրիշների: Համատեղ երեկոներից մեկում շատ խոսվեց Պ. Ադամյանի, Սիրանույշի, Զարիֆյանի, Աբելյանի, արտասահմանում կատարած իրենց ուղևորությունների և այլնի մասին: Հիշում եմ, Արուս Ոսկանյանը մեծ եռանդով պատմեց Փարիզում իր հետ պատահած մի ծիծաղաշարժ դեպք: Չարենցը՝ լարված ուշադրությամբ լսելուց հետո, սկսեց այն աստիճան ուժեղ ծիծաղել, որ ծիծաղի գալարումների ժամանակ գլորվեց և վայր ընկավ թախտից, ապա փոքր-ինչ ուշքի գալով՝ անընդհատ խնդրում էր. «Արուս ջան, մե՛կ էլ պատմիր»: Նա ստիպում էր պատմել, կրկնել հատկապես այն տեղը, որն իրեն առանձնապես դուր էր եկել և, նորից լսելով՝ կրկին նույն ուժով քրքջում էր:

Այդ նույն ամռանը Չարենցը ինձ հետը Լենինական տարավ, մնացինք երեք անմոռանալի օր (նույն գնացքում էր նաև Ավ. Իսահակյանը, բայց նա Կիրովական էր գնում): Թե սիրո ինչպիսի ցույցեր եղան Լենինականում Չարենցի պատվին, պետք էր միայն աչքով տեսնել: Նրան շրջապատող գրականասեր երիտասարդությունը հենց առաջին օրը խնջույք կազմակերպեց Չըռ-չըռ կոչվող ջրվեժի մոտ: Չարենցի Լենինականում գտնվելու լուրը կայծակի արագությամբ տարածվեց քաղաքով մեկ: Գետափնյա ողջ բացատը հեղեղվել էր մարդկանց հոծ խմբերով: Մարդիկ բուռն ցանկություն ունեին մոտիկից տեսնելու, լսելու կամ որեւէ խոսք փոխանակելու մեծ պոետի հետ: Չարենցը անչափ զգացված էր, կասեի նույնիսկ փոքր-ինչ հուզված, որը վարպետորեն աշխատում էր աննկատ դարձնել շրջապատողներից:

Նույն տարում Երևանում տեղի ունեցավ Ստեփան Շահումյանի արձանի հանդիսավոր բացումը: Չարենցը միտինգին մասնակցում էր կառավարական կազմի հետ, իսկ ես նրա տված տոմսով իրավունք ստացա մոտենալու արձանի

պատվանդանին: Հիշում եմ, ինչպիսի հպարտությամբ էի այնտեղից նայում իմ հասակակիցներին:

Արձանի բացումից հետո Չարենցը, ոգևորված օրվա անցուդարձով, անասելի երջանիկ էր զգում իրեն, ինչպես միշտ բոլոր այն նախաձեռնություններից հետո, որոնք նպաստում էին քաղաքի գեթ փոքր-ինչ կերպափոխմանը: Տոնածառի շուրջը պտտվող երեխայի անզուսպ անմիջականությամբ և հրճվանքով տարվել էր հուշարձանով և անընդհատ փոխելով դիրքը՝ տարբեր կետերից դիտում էր, խրախուսանքի ու հավանության ձայներ արձակում:

Ի պատիվ հանդիսության, Չարենցն այդ օրը կազմակերպեց մեծ ճաշկերույթ, ապա պատվիրեց Մերկուրովի ստեղծագործության մանրակերտը, որը պահում էր գրասեղանի վրա:

Բուռն ոգևորության պահերը, սակայն, այդ ամառ մերթ ընդ մերթ շղարշվում էին լուռ թախիծով: Անգամ ինձ չէր զլանում խոստովանել իր մեծ ցանկությունը ամուսնանալու՝ հատկապես երեխաներ ունենալու համար: Երբեմն կատակով հարց էր ուղղում ինձ, թե ինչպիսի կին հարմար կլիներ իրեն, և հարցը երկար քննարկելուց հետո գալիս էր այն համոզմանը, որ առողջ ու գեղեցիկ երեխաներ ունենալու համար անհրաժեշտ է ընտրել հենց այդպիսին:

Մեկ տարի անց ես մեկնեցի Մոսկվա՝ ուսումս շարունակելու: Այդ ժամանակ էր, որ իրագործվել էր Չարենցի ցանկությունը. նկարիչ Արարատ Ղարիբյանի տանը ծանոթանալով Իզաբելլա անունով մի աղջկա հետ՝ նա շուտով ամուսնանում է և նամակով հայտնում ինձ իր իսկ խոսքերով՝ մեծաչյա, սևաչյա, առողջ ու գեղեցիկ աղջկա հետ ամուսնանալու լուրը:

1936 թվականի մայիսին Մոսկվայից վերադարձա Երևան և հենց առաջին օրը պատրաստվում էի այցելել Չարենցին, երբ երիտասարդ գրող Գարեգին Բեսը եկավ մեր տուն և ասաց, թե Չարենցը շտապ կանչում է ինձ: Այդ ժամանակ արդեն ապրում էր նոր ստացած բնակարանում (այժմյան Լենինյան պողոտայում), որտեղ և ծանոթացա կնոջ՝ Իզաբելլայի հետ և տեսա Չարենցի հրաշալի դուստրերին՝ անուշ քնած: Ավագ դուստրը՝ Արփենիկը (Բոժիկը), 4 տարեկան էր, իսկ կրտսերը՝ Անահիտը (Ադոկը)՝ մոտ 3 տարեկան: Չարենցը բավականաչափ փոխված էր, ընկճված ու վատառողջ: Նա մի տեսակ մեծացել էր, կարծես կքվել էր հոգսերի տակ. երբեմնի աշխույժ, պայծառ դեմքին ու աչքերին թախիծ էր իջել և ժպիտն էլ դարձել երկչոտ ու խեղճ: Ինձ հետ ունեցած երկար հարցուփորձի ժամանակ (իմ գործերից, Մոսկվայից) շատ ցրված էր ու մտահոգ, և դեմքը պայծառանում էր միայն, երբ հայացքը ուղղում էր քնած երեխաների կողմը:

Այդ նույն 1936թ. ամռանը Չարենցը Իզաբելլային երեխաների հետ ուղարկեց Ծաղկաձոր, իսկ ինքը մնաց քաղաքում: Օրերով տնից դուրս չէր գալիս և նստած գրասեղանի մոտ՝ անընդհատ գրում էր ու գրում:

Այդ օրերին էր, Չարենցի մոտ գնալիս, ինձ հետ էր բարեկամուհիս՝ իր աղջնակի հետ: Մեզ տեսնելով՝ Չարենցը, հակառակ վատառողջ վիճակին, շատ ուրախացավ և առանց վայրկյան կորցնելու՝ ասելով, թե անմիջապես կվերադառնա, հենց տնային պիժամայով դուրս եկավ տնից: Դուրս գալով պատշգամբ՝ տեսա, որ Չարենցը արդեն փողոցն անցել և ուղղվել էր դեպի դիմացի կրպակը: Քիչ անց վերադարձավ մի մեծ ձմերուկ ձեռքին և խիստ գոհ, որ մեզ և փոքր հյուրին կարող է հյուրասիրել: Այդ իմ փոքրիկ բարեկամուհին՝ Մեսսալին Խալեյանը, այժմ աշխատում է Չեխովի անվան դպրոցում՝ որպես ուսմասվար...

Աղասի Խանջյանի Թբիլիսի մեկնելու օրը Չարենցը տվեց մի գրություն և խնդրեց անպայման կայարան գնալ և որևէ կերպ հանձնել Խանջյանին:

Հիշում եմ, շոգ երեկո էր, երբ հասա կայարան, արդեն մթնշաղ էր: Կառավարական գնացքը կանգնած էր երկրորդ գծի վրա, և հենց այդտեղ՝ կառամատույցում, սպիտակ վերնաշապիկը հագին՝ տեսա Խանջյանին, որը ճեմում էր մի քանի հոգու հետ՝ սպասելով գնացքի մեկնելուն: Զգույշ սկսեցի մոտենալ առաջին անցուղով և մտածում էի, թե ինչպես կատարեմ Չարենցի հանձնարարությունը: Խանջյանը տեսնելով և երևի զգալով, որ ուզում եմ մոտենալ, անցավ գծերի վրայով և մոտենալով ինձ՝ հարցրեց. «Ինչպե՞ս է Չարենցը». ես անմիջապես հանձնեցի գրությունը, որն առանց կարդալու դրեց գրպանը և ասաց, որ բարևեմ Չարենցին: Հեռացա՝ աչքերիս մեջ տանելով Խանջյանի մտահոգ դեմքն ու թախծոտ աչքերը:

Չարենցն այդ շրջանում շատ էր ընկճված, և իմ ջանքերը՝ նրան պաշարող ահավոր մտքերը որևէ կերպ ցրելու, մնում էին ապարդյուն: Ես այն ժամանակ մի քիչ դաշնամուր էի նվագում: Իր աշխատասենյակից Չարենցը հաճախ ինձ ստիպում էր գնալ հյուրասենյակ, որտեղ դրված էր դաշնամուրը, և նվագել որևէ բան: Իմ նվագացանկը շատ սահմանափակ էր, և նույն երգերը կամ վալսերը կրկնում էի տասնյակ անգամ. երբ մատներս թմրում էին, ու դադարում էի նվագել, Չարենցը գոռում էր սենյակից, որ շարունակեմ, երբեմն էլ, երբ արդեն, ի վիճակի չլինելով՝ դադարեցնում էի նվագը և զգում էի, որ լռություն է տիրել, կամաց մոտենում էի աշխատասենյակի դռանը ու տեսնում, որ գրասեղանի մոտ, գլուխը հենած ձեռքերին, լուռ հեկեկում է:

Աղասի Խանջյանի մահվան բոթը ցնցեց Չարենցին: Շատ եմ ցավում, որ այդ լուրը հաղորդողը ես եղա՝ փողոցում ակամա ականատես լինելով մահվան մի լուռ թափորի:

Իմանալով, որ հանգուցյալը Խանջյանն է և այն, որ Թիֆլիսից բերվել է Երևան,-շտապեցի Չարենցին հայտնելու տեսածս լսածս:

Մինչև հիմա չեմ կարող մոռանալ աչքերիս առաջ կատարված ցնցող տեսարանը: Չարենցը թավալգլոր եղավ, սկսեց գալարվել ու հեկեկալ. մի բան ասաց միայն. «Սուտ է...»:

***

Չարենցի 70-ամյա հոբելյանի օրերին ինձ մոտ եկավ այն ժամանակ «Գրական թերթի» խմբագիր Համո Սահյանը և խնդրեց տրամադրել Չարենցից որևէ անտիպ՝ «Գրական թերթում» տպագրելու: Պոետին հատուկ ներքին հուզմունքով նա ընտրեց մի քանիսը, այդ թվում և «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո» անտիպը: «Գրական թերթում» լույս տեսած անտիպները ճանապարհ բացեցին Չարենցի թողած մեծ ժառանգության մնացած մասի համար:

Հենց այդ օրերին ինձ մոտ եկավ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ձեռագրատան վարիչ Գոհար Ազնավուրյանը և խնդրեց ծանոթանալ Չարենցի անտիպ ձեռագրերին: Իր ազնիվ գործին անմնացորդ նվիրված այդ կինը՝ Գոհար Ազնավուրյանը, այնուհետև մի շարք հանդիպումների ժամանակ ցուցաբերել է, ես կասեի, մայրական խնամք, ջերմեռանդ մտահոգություն և գործարար վերաբերմունք ձեռագրերի բախտի, հանձնման ու պետականորեն պահպանելու հարցերին:

1969 թվականի աշնանը Չարենցի տուն-թանգարանի դիրեկտոր Նվարդ Բաղդասարյանը ցանկություն հայտնեց հնարավորություն ընձեռել նկարահանելու չարենցյան ձեռագրերը՝ տուն-թանգարանում ցուցադրելու համար: Նկարահանումները տևեցին մոտ 1 ամիս (լուսանկարիչ Բ. Մավիսակալյան). ձեռագրերի լուսանկարները այժմ գտնվում են Չարենցի տուն-թանգարանում:

Վերջապես 1969 թվականի դեկտեմբերի 23-ին Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պաշտոնական մթնոլորտում կատարվեց Չարենցի ձեռագրերի հանձնման արարողությունը՝ ռադիոյի և հեռուստատեսության ներկայացուցիչների մասնակցությամբ. ներկա էր Չարենցի կրտսեր դուստր Անահիտը:

Անկեղծ ասած, իհարկե, ինձ համար շատ դժվար էր բաժանվել այդ ձեռագրերից, որովհետև դրանք ուղեկցել են ինձ իմ ողջ գիտակցական կյանքում և, լինելով կյանքիս ուղեկիցը՝ դարձել են կարծես և կյանքիս բովանդակությունը: Անգամ պատերազմի դաժան տարիներին, երբ ես բանակում էի, աղերսում էի աստծուն, պատահականությանը, թե բնության հզոր արդարադատությանը, որ պահպանվի իմ

կյանքը, որ ինձ հետ ոչինչ չպատահի հանուն այն բանի, որ ձեռագրերը նորից լույս աշխարհ գան և ծառայեն իրենց նպատակին:

Հիմա հանձնած լինելով այն թանգարան՝ կարծես զրկվել եմ նաև իմ կյանքի ուրույն բովանդակությունից, որը աշխատում եմ համալրել իմ արվեստով: Ավարտելով մասնագիտական կրթությունս ինստիտուտում՝ տարիներ շարունակ անդրադարձել եմ չարենցյան թեմային և 1967 թվականին՝ Չարենցի 70-ամյա հոբելյանի օրերին, իմ անհատական ցուցահանդեսում՝ նրան նվիրել մոտ 25 յուղաներկ և գրաֆիկ գործեր: Այժմ էլ ինձ հանգիստ չի տալիս չարենցյան թեմայի նորովի բացահայտումը, և ես իմ ուժերի ներածին չափ ցանկանում եմ մարմնավորել այն առաջիկա անհատական երկրորդ ցուցահանդեսով:

Այսօր արդեն ձեռագրերը պետական հսկողության տակ են, և հե՛նց այսօր նրանք շռայլորեն իրենց ծառայությունն են մատուցում մասնագետներին: Իրենց խոցոտված և տեղ-տեղ փոշիացած վիճակում անգամ այդ ձեռագրերը, դեռ լայն ասպարեզ դուրս չեկած, առաջինը ձեռք պարզեցին հենց իրեն՝ պոետի կրտսեր դուստր Անահիտին: Գրվեցին, գրվում են և դեռ կգրվեն հատորներ: Պահպանված ամենավերջին փոշեհատիկն իսկ, իր կենսունակությամբ հոմերոսյան սեղանի փշրանք դարձած, կարող է վերաճել հաստափոր ուսումնասիրության և նոր լույս սփռել բազում հարցերի վրա ու դառնալ մանրակրկիտ ուսումնասիրության առարկա՝ ներկա ու գալիք սերունդների համար: Չափազանցություն չի լինի ասել, որ արյունագիր այդ պատառիկներից յուրաքանչյուրը ունի դարաշրջանային նշանակություն և կարոտ է հզոր գրչի և գիտական ընդհանրացումների մեծ թափի:

Հոգուս պարտքը կատարած լինելով՝ այլ բան չի մնում ասել ինձ հիմա, քան արտահայտել իմ խոր երախտագիտությունը և խոնարհ հարգանքը մեծ Չարենցի հիշատակին՝ նրա վստահության համար: